

Արցախի Հայաթափումը Մերժող Բազմամարդ Հանրահաւաք՝ Ստեփանակերտի Մէջ



Կարդալ էջ 4

Քեպէզի նահանգային ընտրութիւններուն իրենց թեկնածութիւնը առաջադրած են երեք հայուհիներ



Կարդալ էջ 3

CAMAM

3401, Olivier Asselin
Montréal, Qc
H4J 1L5

397, boul. des Prairies
Laval, Qc
H7N 2W6

45 Hallcrown Place
Willowdale, On
M2J 4Y4

To donate online www.camam.org

«Դիմադրութիւն» Ծարժումին Հանրահաւաքը՝ Արցախի Հանրապետութեան Հռչակման 31-Ամեակին Առիթով



Կարդալ էջ 4

Տէր եմ Հայրենիքիս. Արցախի զօրակցական հաւաքներ Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ



Կարդալ էջ 3

YES YOU CAN



Introducing,
The All-New HR-V

CONTACT US FOR
MORE INFORMATION

**KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN**



7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 321-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



ՄեփակաՆատէր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Թուրքերուն Հետ Հաշտուելէ Առաջ, Հայեր Պէտք Է Հաշտուիմ Միմեանց Հետ

Հայաստանի կառավարութիւնը կրնա^ոյ բան մը ճիշդ ընել։ Չկայ օր մը, որ անցնի առանց յաւելեալ վատ լուրերու, Հայաստանէն եւ Արցախէն։ Մեր թշնա-միները մեղադրելու փոխարէն՝ մենք պէտք է տեսնենք մեր սեփական թերութիւնները եւ դադրինք մենք մե-զի աւելի վէրքեր հասցնելէ։

2020–ի արցախեան պատերազմին կրած ջախջա-խիչ պարտութենէն ետք, Հայաստանի մէջ տիրող ճգնաժամային ծանր պայմաններուն բերումով կը կարծուէր, որ հայ ղեկավարներ իմաստութիւնը կ’ունե-նան համախմբելու ժողովուրդը եւ ուժեղացնելու բա-նակը՝ երկրին վրայ հետագայի յարձակումներ կանխե-լու համար։

Զարմանալիօրէն, Հայաստան որդեգրած է ուղ-ղութիւն մը, որ ազգը կը տանի յաւելեալ պառակտման եւ թուլացման։ Հայ ղեկավարներ չափազանց ապաշ-նորհ գտնուեցան՝ այսքան ճգնաժամային հարցեր ու-նեցող երկիրը կառավարելու համար։ Փոխանակ փորձե-լու նուազագոյնի հասցնել Հայաստանի կորուստները՝ անոնք վճռած են աւելցնելու թշնամիներուն հասցու-ցած վնասը։

Զորս տարի շարունակ, վարչապետ Նիկոլ Փաշին-եան հայերը բաժնեց «սեւեր»ու եւ «սպիտակներ»ու, արցախցիներու եւ հայաստանցիներու, նախկին առաջ-նորդները ընդդէմ ներկաներու եւ Հայաստանը ընդդէմ Սփիւռքի, այնպիսի ժամանակի մը մէջ, երբ հայերը համախմբուելու մեծ կարիք ունին։ Ան սպառնաց ներ-քաղաքական իր հակառակորդներուն՝ «պատերուն զարնել եւ փռել ասֆալթին»։ Անցեալ տարի, ան նոյ-նիսկ մուրճը ձեռքին գնաց նախընտրական արշաւի՝ խոստանալով ջարդուփշուր ընել իրեն ընդդիմացողնե-րուն գլուխները։

Հայաստանը ղեկավարելու համար ոչ միայն Փա-շինեանն է չափազանց ապաշնորհ, այլեւ անոր խմբա-կին նախարարներն ու խորհրդականները։ Ոչ հմուտ ղեկավարը չի կրնար հմուտ նշանակումներ ընել։

Իբրեւ օրինակ վերցնենք Փաշինեանի կողմէ Զա-րեհ Սինանեանի նշանակումը «Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար»ի պաշտօնին։ Սինանեանի միակ որակաւորումը վարչապետին կոյր կողմնակիցը ըլլալն է։ Հետեւաբար, Սինանեան աշխատանքային իր երեք տարիներուն ընթացքին, գրեթէ որեւէ արժանի բան չըրաւ, բացի կառավարութեան սուղ պիւտճէն վատնելէ՝ իր եւ անձնակազմին, ամբողջ աշխարհի տա-րածքին յաճախակի շրջագայութիւններ կատարելու ուղղութեամբ։

Սինանեան վերջերս յայտարարեց, որ իր գրա-սենեակը «Համաշխարհային հայկական վեհաժողով» պիտի գումարէ այս տարուան Հոկտեմբերին։ Կարելի է ակնկալել, որ ան ողջախոհութիւնը պիտի ունենար «Համաշխարհային վեհաժողով»ին հրաւիրելու Հայաս-տանի եւ Սփիւռքի հայկական բոլոր կազմակերպու-թիւններու ներկայացուցիչները եւ հանրաձայնաճ մար-դիկ՝ անկախ անոնց քաղաքական պատկանելութենէն։

Սինանեանի եւ վարչապետի միակ նպատակը, սակայն, տպաւորութիւն ստեղծել է, թէ՛ իրենք բանով մը զբաղած են, եւ ոչ թէ ժողովուրդին համար օգտակար բան ընելով։ Սինանեան կարճատեսօրէն որոշած է իր «տիրոջ» օրհնութեամբ «Համաշխարհային հայկական վեհաժողով»ին հրաւիրել վարչակարգի կողմնակից հա-յերը՝ դուրս ձգելով անոնք, որոնք համարձակած են ընդդիմանալ ներկայ ղեկավարներուն։ Հայաստանի իշ-խանութիւնը իրականութեան մէջ զբաղած է ոչ թէ Սփիւռքը համախմբելով, այլ զայն բաժնելով։

Բնականոն երկրի մը մէջ, Սինանեանի նման աշ-խատողը արդէն շատոնց արձակուած կ’ըլլար իր աշ-խատանքէն՝ ապաշնորհութեան եւ կառավարութեան թանկարժէք աղբիւրները վատնած ըլլալուն համար։ Սակայն այս վարչապետը աշխատանքէն չի հեռացներ իրմէ աւելի ապաշնորհ ստորագասը...։ Ցաւօք, Սինան-եան նոյնիսկ չի գիտեր իր աշխատանքին բնոյթն ու նկարագիրը։ Ան անմտօրէն հրաւիրած է արաբները՝ ներգաղթելու համար Հայաստան՝ չհասկնալով, որ իր պատասխանատուութիւնը կապուած է միայն սփիւռ-քահայերու հետ, այլ ոչ թէ արաբներու կամ այլ ազգու-թիւններու։ Հեռատեսիլային իր յաճախակի հարցազ-րոյցներուն մէջ Սինանեան միշտ զբաղած է հատուա-ծական քաղաքականութեամբ՝ քննադատելով հայկա-կան մեծ կազմակերպութիւնները եւ ժողովուրդին մէջ յառաջացնելով յաւելեալ պառակտումներ։ Ան չի հասկնար, որ իր գործը ոչ թէ Փաշինեանի վարչակարգի քարոզիչ ըլլալն է, այլ՝ պետական պաշտօնեայ, որ աշ-խատավարձք կը ստանայ՝ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ կամուրջ հանդիսանալուն համար։

Եթէ Փաշինեանի եւ Սինանեանի արդարացումը

այն է, որ իրենց քաղաքական ընդդիմախօսները կը հրաժարին մասնակցելէ «Հայկական համաշխարհային խորհրդաժողովին», ապա ասիկա լաւ առիթ է զանոնք հրաւիրելու համար։ Անոնք, որոնք մերժեն հրաւէրը, ներկայացած կ’ըլլան բացասական լոյսի տակ, իսկ կա-ռավարութիւնը մեծահոգի կ’երեւի, այլ ոչ թէ մանրա-միտ։ Վայել չէ Հայաստանի իշխանութեան՝ հաշիւ մաքրել ուզող «պաշտպոզուք»ի պէս վարուիլ։ Ցաւօք, ան հասունութիւնը չունի գերծ մնալու մանրախնդրու-թենէ։ Հայաստան բոլո՛ր հայերուն տունն է, ոչ թէ միայն անոնց, որոնք համաձայն են վարչակարգին։ Հզօր թշնամիներով չըջապատուած փոքր եւ թոյլ ժողո-վուրդը չի կրնար ինքնիրեն արտօնել՝ բաժնուիլ աւելի փոքր բեկորներու։

Աշխարհի բոլոր հայերուն ողջունելու փոխարէն, կառավարութիւնը, վերջին շաբաթներուն, արգիլած է հայրենիք մուտքը քանի մը յայտնի սփիւռքահայերու, որոնց միակ մեղքը, իբր թէ, «ժողովրդավարական» վարչակարգի հակառակորդներ ըլլալն էզգգ։ Մինչ, նոյն ատեն, թրքական «Գորշ գայլեր» ահաբեկչական խմբաւորման անդամներուն արտօնուած է մուտք գոր-ծել Հայաստան եւ անարգել հայ նահատակներու յիշա-տակը, Երեւանի՝ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած յուշահամալիրի տարածքին մէջ։

Անցեալ քսան տարիներու ընթացքին, Հայաստան կազմակերպած է Սփիւռք–Հայաստան քանի մը համա-ժողով։ Անոնցմէ ոչ մէկը օգուտ բերած է։ Սինանեանի ծրագրած «խորհրդաժողովը» պիտի արժանանայ նոյն բախտին։ Փաշինեան շատ անգամ խօսած է՝ Հայաստա-նի կառավարութեան մէջ սփիւռքահայերուն բարձր պաշտօններ ստանձնելու արտօնութեան մասին։ Ցաւօք, խօսքերէ զատ, ան ոչ մէկ քայլ առած է այդ ուղղու-թեամբ։ Նմանապէս Սինանեան, մօտաւորապէս մէկ տարի առաջ, մեծ աղմուկով յայտարարեց, որ իր գրա-սենեակը պիտի նշանակէ Սփիւռքի յանձնակատարներ աշխարհի հայկական համայնքներու մէջ, իսկ մինչեւ հիմա ան ոչ մէկ նմանօրինակ յանձնակատար նշանա-կած է։

Երբ Փաշինեան 2018–ին եկաւ իշխանութեան, ան խոստացաւ, որ երեք միլիոնէն նուազ հաշուող Հայաս-տանի բնակչութիւնը մինչեւ 2050 պիտի հասցուի հինգ միլիոնի։ Ցաւօք, Հայաստանի բնակչութիւնը, անոր պաշտօնավարման չորս տարիներուն ընթացքին ոչ թէ չէ աճած, այլ նուազած է։ Դէպի Հայաստան հայրենա-դարձութիւնը քաջալերելու մասին խօսելէ բացի, ուրիշ ոչինչ եղած է։

Շատոնց ի վեր ժամանակն է, որ համայն հայու-թիւնը համախմբուի՝ իր հայրենիքը պաշտպանելու հա-մար սահմանին երկու կողմը գտնուող հզօր թշնամինե-րէն։ Թուրքերու հետ հաշտուելէ առաջ, հայեր նախ պէտք է լեզու գտնեն միմեանց հետ։

Յարութ Սասունեան

*Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան*

«Դիմադրութիւն» Ծարժումին Հանրահաւաքը՝ Արցախի Հանրապետութեան Հռչակման 31-Ամեակին Առիթով

2 սեպտեմբերին, Ֆրանսայի հրապարակին վրայ տեղի ունեցաւ «Դիմադրութիւն» շարժումին հանրա–հաւաքը՝ նուիրուած Արցախի Հանրապետութեան հռչակման 31–ամեակին։

Հանրահաւաքը սկսաւ Հայաստանի Հանրապե–տութեան եւ Արցախի Հանրապետութեան օրհներգնե–րով։ Ներկաները մէկ վայրկեան լուռութեամբ յարգեցին յանուն հայրենիքի զոհուած հայորդիներուն յիշատակը։

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան իր խոնարհումը արտայայտեց մէ–կուկէս տարուան մէջ միասնական ըլլալու եւ «Դիմադ–րութիւն» շարժման այս ամբողջ նախաձեռնութեան ընթացքին քաղաքացիներու աշխուժութեան համար։

Ան շեշտեց, որ այսօր ալ պէտք է վճռականու–թեամբ լեցուիլ ու միասնականութիւն ցուցաբերել, քրտնաջան աշխատանքով հասնիլ յաջողութիւններու՝ յանուն Հայաստանի եւ Արցախի պայքարին։

«Այսօր մենք իրաւունք չունինք Արցախի ժողո–վուրդը, Արցախը մինակ ձգելու, պարտաւոր ենք մեր պայքարի յաղթական ոգիով Արցախի ժողովուրդի կող–քին կանգնիլ», ըսաւ ան։

Մենք հիասթափուելու իրաւունք չունինք, հիաս–թափութիւնը Նիկոլ Փաշինեանէն մեծ վտանգ է, իր խօսքին մէջ ըսաւ Ազգային ժողովի «Պատիւ ունեմ» խմբակցութեան ղեկավար Հայկ Մամիջանեան։

Մամիջանեան նշեց, որ Պրիւքսէլի վերջին հանդի–պումներէն ետք հրապարակուած յայտարարութիւննե–րուն մէջ ո’չ Լեռնային Ղարաբաղի մասին, ո’չ գերի–ներու, ո’չ ալ Արցախի ինքնիշխանութեան մասին յիշա–տակում կայ։

«Վերջնականապէս Հայաստան–Ազրպէյճան յա–րաբերութիւնները զատուած են դարաբաղեան տագ–նապէն։ Սա կը նշանակէ, որ պաշտօնական Երեւանը ձեռքերը կը լուայ Արցախէն։ Ու մենք ատիկա թոյլ տալ չենք կրնար», ըսաւ ան։

«31 տարի առաջ այս օրը Ստեփանակերտի մէջ տեղի ունեցաւ Լ Ղ Ի Մ՝ մարզային պատգամաւորներու եւ Շահումեանի չըջանային խորհուրդի միացեալ նիստը, որուն ընթացքին Արցախը հռչակուեցաւ անկախ», իր ելոյթին մէջ յայտարարեց ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաս–տան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղա–թէլեան։

«Արցախի անկախութիւնը հայ ժողովուրդը ձեռք բերել է իր զաւակներուն արեան գնով։ Արցախը հայ ժողովուրդի արժանապատուութիւնն է։ Արցախը մեր անցեալն է, մեր ներկան ու ապագան։ Արցախը մեր հողն ու ջուրն է, մեր ժառանգութիւնը։ Բոլոր անոնք, որոնք կ’ըսեն, եկէք հայրենիքի մէկ մասը գիջինք, որ միւս մասը պահենք, գլուխները պատին կու տան։ Մենք գիջելով պիտի կորսնցնենք նաեւ Հայաստանի Հանրապետութիւնն ու պետականութիւնը», յայտարա–րեց Իշխան Սաղաթէլեան։ Ան ըսաւ, որ Արցախի գլխուն կախուած աղէտը աղէտ է նաեւ Հայաստանի համար, Արցախը հայ ժողովուրդի համար գոյարանա–կան խնդիր է, անիկա մեր ուժն է, անվտանգութիւնը, մեր արժանապատուութիւնը։

Արցախի Հայաթափումը Մերժող Բազմամարդ Հանրահաւաք՝ Ստեփանակերտի Մէջ

Սեպտեմբեր 2–ին, Արցախի Հանրապետութեան հռչակման 31–ամեակին առիթով Ստեփանակերտի կեդ–րոնական փողոցները լեփ–լեցուն էին։ Երեկոյեան ժամը 18:00–ին Ազատութեան հրապարակէն քայլերթ սկսաւ դէպի Վերածնունդի հրապարակ, ուր մէկ ժամ ետք տեղի ունեցաւ հանրահաւաք։ Երթը կ’առաջնորդէ–ին Արցախի Ազգային ժողովի խմբակցութիւններուն պատգամաւորները, ներկայ էին նաեւ Հայաստանի Ազ–գային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» խմբակցութիւններու անդամներ Վահէ Յա–կոբեան, Գեղամ Մանուկեան եւ Տիգրան Աբրահամեան։

Երթին դիմացէն խումբ մը երիտասարդներ կը տանէին Արցախի դրօշը։ Երթը կ’ուղեկցուէր Արցախի մասին երգերով։ Շէնքերէն եւ խանութներէն քաղաքացիները կը հետեւէին երթին, կը ծածանէր Արցախի դրօ–շը։ Երթի ընթացքին միասնութեան եւ պայքարի կոչեր կը հնչէին։

Արդէն Վերածնունդի հրապարակին վրայ, ուր նաեւ նախագահական չէնքն է, ոստիկանական պատն էր, ինչպէս նաեւ նախագահականի անվտանգութեան աշխատակիցները։ Նախագահ Արայիկ Յարութիւնեան իր նստավայրին բակէն կը հետեւէր հանրահաւաքին։

Արցախցիները հանրահաւաքին եկած էին «Ո՛չ Արցախի հայաթափման», «Ո՛չ ազրպէյճանական բռնազրաւումին» պաստառներով։ Խումբ մը քաղաքացիներ ալ աջակցութիւն կը յայտնէին պաշտպանու–թեան բանակի նախկին հրամանատար Միքայէլ Արզումանեանին, որ կը մեղադրուի Շուշիի անկման եւ հան–րահաւաքէն երկու օր առաջ կալանաւորուեցաւ։ Անոնք կը պահանջէին զայն ազատ արձակել։



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Բարսեղ Կեսարացի Հայրապետը մեզի կը յիշեցնէ, որ «Խոստովանութիւնը առանց հաւատքի, աղօթքի եւ ծումապահութեան իմաստ չունի»:

Իւրաքանչիւր քրիստոնէայ պէտք է գիտակցի, որ Աստուած առանց մեր մեղքերու խոստովանութեան ալ գիտէ մեր մեղքերը: Աստուած Եսայի մարգարէի բերնով ըսած է.- «Ես եմ, որ քու յանցանքներդ կը ջնջեմ: Քու մեղքերդ ալ պիտի չյիշեմ: Յիշեցո՛ւր ինծի, դուն խօսէ՛ (խոստովանի՛ր), որպէսզի արդարանաս» (ԵՍ.43.25-26):

Հետեւաբար, անհրաժեշտ է հաշտարար մը, փրկարար մը՝ մեղքը միանգամընդմիջտ վերացնելու համար: Ահաւասիկ թէ ինչո՞ւ մեր Արարիչն Աստուած Իր Միածին Որդին աշխարհ զրկեց, որպէսզի մեղքի ստրկութիւնը վերցնէ աշխարհէն.- «Ահաւասիկ Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (ՅԻ 1.29):

Աստուածաշունչը յատուկ կերպով կը ներկայացնէ այս հանգամանքը, երբ Առաքեալին բերնով կ'ըսէ. «Մէկ

Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ եւ մարդոց միջեւ՝ Քրիստոս Յիսուս մարդը, որ Ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար» (Ա.Տմ 2.5-6):

Այո՛, հաշտութեան համար Յիսուս սուղ գին վճարեց, Իր կեանքը տուաւ, Իր արիւնը թափեց Խաչին վրայ: Հետեւաբար, Աստուած Իր Որդիին արեան հեղումով էր, որ մեղաւորներուն հաշտեցուց Իր հետ, ցոյց տալով Իր անհուն սէրը մեղաւորին՝ մարդուն:

Քրիստոսի Յարութեամբ մարդը հնարաւորութիւն ունեցաւ խոստովանութեամբ գտնելու իր հոգեկան խաղաղութիւնը:

Այսօր, Քրիստոնէական եկեղեցին ընդհանրապէս եւ հայ Առաքելական եկեղեցին մասնաւորապէս, հնարաւորութիւն ստեղծած են մեղքերու խոստովանութեամբ թողութիւն ստանալու շնորհքին: Ուրախալի երեւոյթ է, որ հաւատացեալներ յաճախ կը խոստովանին իրենց մեղքերը եւ թողութեան կ'արժանանան, իսկ ան որ չի խոստովանիր մեղքերը, աւետարանը կ'ըսէ.- «Արդէն իսկ դատապարտեալ է»:

Խոստովանութիւնը խորքին մէջ մէկ անգամուան համար սահմանուած արաք մը չէ, այլ ընթացք մըն է, որ վախճան չունի:

Պօղոս Առաքեալ հռոմէացիներուն ուղղած իր նամակին մէջ կը հաստատէ.- «Աստուած մեզի հանդէպ Իր սէրը յայտնեց անով, որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ» (Հռ 5.8): Տակաւին.- «Աստուած Իր Որդիին մահովը մեզի Իր հետ հաշտեցուց» (Հռ 5.10):

Ի՞նչ կը նշանակէ հաշտուիլ Աստուծոյ հետ: Հաշտուիլ Աստուծոյ հետ կը նշանակէ ԱՐԴԱՐԱՆԱԼ, այսինքն՝ Աստուծոյ աչքին արդար նկատուիլ: Այսպէս կը պատգամէ նաեւ Առաքեալը.- «Իր արիւնով արդարացած ենք» (Հռ 5.9): Հետեւաբար, ընտրե՛նք լաւագոյն ճանապարհը, հետեւինք մեծագոյն ՀԱՇՏԱՐԱՐԻՆ, որպէսզի նոյնինքն Աստուած մեզի ԱՐԴԱՐԱՑՆէ յաւիտեան:

Բարգէն Արքեպիսկոպոս Չարեան



Քրիստոնեության իմաստը կանուխէն լաւապէս ճանչցած եւ զայն իւրացուցած հայ ժողովուրդը առաջին իսկ օրէն գիտցաւ, որ խաչը լոկ փայտ չէ, ոչ ալ մահուան գործիք, այլ անմահութեան յոյս եւ յաղթանակի փարոս, որ դարեր շարունակ ոյժ ներշնչեց հայ հաւատացեալին, հայ ընտանիքին, հայ քաջամարտիկ զինուորներուն, որովհետեւ ան մեզի համար եղաւ կեանքի բանալին եւ մեր պատմութեան ուղին:

Այսօր խաչի խորհուրդին գիտակից հայ ժողովուրդի զաւակներս, աւելի քան երբեք, մեր կեանքն ու գործունեութիւնը պէտք է ամրապնդենք զոհողութեան եւ համբերութեան ոգիով, որպէսզի հասնինք յաղթութեան:

Իւրաքանչիւրս, որպէս հայ քրիստոնեայ, եթէ կ'ուզենք մեր անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքը փրկութեան եւ յաղթութեան ամուր հիմերու վրայ դնել, անհրաժեշտ է, որ պատրաստ ըլլանք մեր խաչը սիրով կրելու:

Եթէ չհաւատանք թէ խաչն է, որ զոհողութեան եւ ծառայութեան ուղիով մեզի պիտի առաջնորդէ յաղթանակի, կը նշանակէ որ չենք թափանցած խաչի խորհուրդի իմաստին:

Հոգեւոր մեր կեանքին մէջ, եթէ Խաչը «Վահան ամրութեան» չդարձնենք, կը նշանակէ թէ խաչին ու Խաչեալին խորհուրդը տկարացած է իր իմաստէն:

Եթէ երբեք Մայր Հայրենիքի պահպանութեան եւ հայ հողի ազատագրութեան ի խնդիր, հայ հողին վրայ կանգնած խաչի խորհուրդը մարմնաւորող անհամար խաչքար-կոթողներ, որպէս կենդանի վկայութիւն խաչի խորհուրդին մեզ չեն ներշնչեր, ուրեմն զանոնք պարպած ենք կեանքէ:

Հետեւաբար, խաչվերացի տօնը մեզի համար ըլլայ խաչին խորհուրդը մեր առօրեային մէջ վերակենսաւորելու մղիչ առիթը, որպէսզի մեր ժողովուրդի կեանքը «հրեղէն սիւնի» առաջնորդութեամբ, դառնայ կնիք մեր թշնամիներուն դէմ, հայ ժողովուրդի փառաւոր յաղթութեան ի խնդիր:

Ուրեմն, եկէ՛ք բոլորս մեր աղօթքները միացնենք ժամասաց Հայրապետին՝ Խաչ քո եղիցի մեզ ապաւէն Տէր Յիսուս, յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան: Ամէն:

ԽԱՉԸ

Թէ Պաշտումի թափն ունենաս՝
Տէրն զոյգ մը թեւ քեզի կու տայ,
Որպէզի Իր ՈՒԺԸ անհաս
Սաւառնացնես երկրի վրայ:

Թէ տեսիլներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,
Որպէսզի Ի՛ր ԿԱՄՔԸ արթուն
Հանդիսացնես երկրի վրայ:

Թէ բարձունքէ միջօսիս Իր հետ՝
Ինքը քեզ շէ՛շտ մը կու տայ,
Որպէսզի Իր ԽՕՍՔԸ յաւետ
Արձագանգես երկրի վրայ:

Թէ վերացած յառիս Իրեն՝
Հո՛ւր լեզու մ'ալ քեզի կու տայ,
Որպէս զի Իր ԿԱՅԾԸ վերէն
Սահեցընես երկրի վրայ:
Եթէ մտնես Իր ամպին մէջ՝
Ինքը քեզի շանթ մը կու տայ,
Որպէսզի Իր ՎՐԷԺԸ անշէջ
Փայլատակես երկրի վրայ:

Իսկ Իր լոյսին թէ երթաս դուն՝
Ինքը քեզի ջահ մը կու տայ,
Որպէսզի Իր ՓԱՌՔՆ անաղօտ
Վարդավառես երկրի վրայ:

Եթէ նետուիս Իր գիրկն անուշ՝
Ինքը քեզի երգ մը կու տայ,
Որպէսզի Իր ՇՆՈՐՀՆ երկնայուշ
Թրթռացնես երկրի վրայ:

Թէ համբուրուիս հետ Իր վերքին՝
Ինքը քեզի կեանք մը կու տայ,
Որպէսզի Իր ՇՈՒՆՉԸ անգին
Ոգեւորես երկրի վրայ:

Իսկ թէ թաղուիս Իր շուքին տակ՝
Ինքը քեզի շող մը կու տայ,
Ոչինչին դէմ յոյսին անփակ
Ճառագայթը երկրի վրայ:

Ու այդ ՈՒԺԸ, այդ ԿԱՄՔՆ ու ԽՕՍՔ
Այդ ԿԱՅԾՆ ու ՎՐԷԺ, այդ ՓԱՌՔԸ սոսկ,
Այդ ՇՆՈՐՀՆ ու ՇՈՒՆՉ, այդ ՅՈՅՍՆ համայն
Քեզի տըրուած ԽԱՉՆ է միայն:

Եղիշէ Արք. Դուրեան



ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿ

Գիտնալով մարդուն կողմէ ինքզինք փրկելու անկարելիութիւնը, Աստուած, մարդուն անկումին առաջին իսկ պահուն, անոր տուաւ փրկութեան սքանչելի խոստում մը (Ծն 3.15): Խոստում մը, որ իր ատենին պիտի կատարուէր Քրիստոսով (հմմտ Գղ 4.4-5):

Այս խոստումով, Աստուած ցոյց կու տար փրկագործական իր նպատակը, որուն տարբեր երեսները կը ներկայացուին եւ կ'ուրուագրուին Հին Կտակարանի ամբողջ երկայնքին, Օրէնքի, մարգարէութեանց եւ միւս գիրքերուն մէջ:

Ս. Գիրքին մէջ բոլոր խոստումներն ալ կապուած են Քրիստոսի աշխարհ գալուստին, այլ խօսքով՝ մարդեղութեան: Իսկ եթէ հարց տանք, թէ ի՞նչ էր Քրիստոսի Մարդեղութեան նպատակը:

ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ԷՐ.-

- 1.- Մարդկութիւնը նորովի արարչագործել, մեղքը հալածելով եւ ապականութիւնը վերցնելով:
- 2.- Մարդիկը լուսաւորել եւ ճշմարիտ աստուածաճանաչութիւն տալ:
- 3.- Մեզ սրբել եւ սուրբ կեանքի մը առաջնորդութիւնը տալ:
- 4.- Աշխարհի բոլոր ազգերէն ու ժողովուրդներէն Աստուծոյ համար մէկ ժողովուրդ կազմել, իր թագաւորութեան հպատակները պատրաստել (Յհ 10.16), եւ զանոնք իր արքայութեան մասնակից դարձնել (Մտ 25.34): Արդեօք չկա՞ր փրկութեան ուրիշ կերպ մը, որ Աստուած որդեգրէր, փրկելու համար իր արարածները:

Անհրաժե՞շտ էր մարդեղութիւնը:

Աստուծոյ համար անկարելի բան չկայ, եւ ուստի Աստուած որեւէ այլ կերպով եւս կրնար փրկել մարդիկը: Բայց եթէ այս կերպը կամեցաւ, կը նշանակէ՝ թէ անոր մէջ տեսաւ մարդկային մտածողութեան համար անկիւնադարձային եւ հիմնապէս վերափոխիչ այն տուեալը, որ կարելոր էր՝ ՄԱՐԴԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- 1.- Աստուած մարդացաւ՝ իր գերազանց սէրը ցուցաբերելու համար:
- 2.- Աստուած մարդացաւ՝ իր աչքին մարդուն գերազանց արժէքը ցուցնելու եւ մարդը բարձրացնելու համար:
- 3.- Աստուած մարդացաւ՝ արդարութեան պահանջքը իրմով հատուցանելու եւ մարդը մահուան դատապարտութենէն փրկելու համար:
- 4.- Աստուած մարդացաւ՝ մարդուն կողմէ Չարին վրայ յաղթանակ տանելու համար:
- 5.- Աստուած մարդացաւ՝ իր մարմնին մէջ մեղքը սպաննելու եւ մեզ ազատութեան Հոգիով իրեն կապելու համար:

ԻՆՉՈ՞Ւ ԱԻԵԼԻ ՇՈՒՏ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ:

Աստուած ինք գիտէ ամէն բանի ճշգրիտ ժամն ու ժամանակը, եւ իւրաքանչիւր միջոցի յարմարաւետութիւնն ու օգտաւետութիւնը:

Աստուած ուզեց որ մարդը նախ պատրաստուի անոր, եւ յետոյ միայն, երբ ի վիճակի ըլլայ ընդունելու, այն ատեն միայն գայ սպասուած իրականութիւնը: Այլ խօսքով, Աստուած վարուեցաւ դաստիարակչական յատուկ կերպով մը, որ մարդուն բարիքին համար իսկ չափազանց կարելոր ու անհրաժեշտ էր: Որովհետեւ, ինչպէս գիտենք, շատ մը բաներ անօգուտ եւ աննպատակ կ'ըլլան իրենց ճիշդ ժամանակէն առաջ կամ ետք:

Արդ, Աստուած մարդոց համար անհրաժեշտ գտաւ այդ նախապատրաստութիւնը եւ դաստիարակութիւնը, որ ինք մատակարարեց իր Օրէնքին ու մարգարէներուն միջոցաւ, մինչեւ որ յարմար ժամանակը եկած համարեց (Գղ 3.24-25): Աստուածաշունչը այս յարմար ժամանակը կը կոչէ «ժամանակին լրումը», «ժամանակին լրանալը», կամ «ժամանակին լեցուիլը» (հմմտ Սր 1.1: Գղ 4.4: Եփ 1.10):

Ի՞ՆՉ ԻՐԱԳՈՐԾԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ:

Քրիստոս իր մարդեղութեամբ մարդը վերադարձուց իր սկզբնական արդարութեան եւ սրբութեան, փորձութեանց դիմաց եւ Չարին վրայ մարդուն կատարեալ յաղթանակը ապահովելով, իր մարմինին մէջ սպաննելով մեղքը, մարդը ազատագրելով մեղքին ճիրաններէն, մահուան մեր դատավճիռը խաչափայտին վրայ գամելով եւ իր սուրբ արիւնով ջնջելով, խափանելով մահուան իշխանութիւնը եւ մեզ Աստուծոյ վերադարձնելով եւ Աստուծոյ որդեգիր դարձնելով:

Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեան



ՄԱՏԹԷՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 22

- Հարսանեկան խրախճանքի առակը (Մտ 22. 1-14)
- Կայսեր տրուելիք տուրքը (Մտ 22. 15-22)
- Հարց մեռելներու յարութեան մասին (Մտ 22. 23-33)
- Ամենամեծ պատուիրանը (Մտ 22. 34-40)
- Քրիստոս՝ Որդի եւ Տէր Դաւիթի (Մտ 22. 41-46)

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ (Մտ 22.15-22)

Մենք յաճախ կը տեսնենք Յիսուսը՝ թիրախ յարձակումներու։ Ան երեք առակ պատմած էր, որոնց մէջ յստակօրէն նկատի առնուած են հրեայ ղեկավարները։ Առակներն են՝ «Երկու որդիներու առակը» (Մտ 21.28-32), «Չար մշակներու առակը» (Մտ 21.33-46) եւ «Հարսանեկան խրախճանքի առակը» (Մտ 22.1-14), բոլորին մէջ ալ կը դատապարտուին հրեայ առաջնորդները։ Եւ ահա, անոնք նոր յարձակման կը դիմեն, յստակ հարցեր ուղղելով Յիսուսի՝ բազմութեան ներկայութեան, անոր վարկին փաստ հասցնելու նպատակով։

Այդ օրերուն, Պաղեստինը հռոմէական լուծի տակ էր, եւ Յիսուսին ուղղուած հարցը հետեւեալն էր. «Մեր օրէնքի համաձայն՝ կայսեր տուրք պէ՞տք է տանք, թէ՞ ոչ»։ Խորքին մէջ երեք կանոնաւոր տուրքեր կային՝ հողահարկ, 1/5 ձէթի կամ գինիի արտադրութեան հարկ եւ եկամտահարկ։ Սա ծուղակ էր։ Հրեաներու համար թագաւորը միայն Աստուած էր, երկրաւոր թագաւորին հարկ վճարելը անարգանք էր Աստուծոյ։ Երկու պատասխանի պարագային ալ Յիսուսը պիտի մեղադրուէր։ Իսկ հարց տուողները երկու հակադիր խումբեր էին՝ փարիսեցիներն ու Հերովդէսի կողմակիցները։

Մատթէոսը իր աւետարանը գրած է Յ. Ք. 80-90 թուականին, երբ Երուսաղէմի Տաճարը արդէն կործանուած էր, եւ հրեաները Տաճարի տուրքի փոխարէն պէտք էր հարկ վճարէին Հռոմի Ժուդիթերի տաճարին։ Յիսուս շատ իմաստուն կը գտնուի, եւ կը պահանջէ տուրքի արծաթ դրամը, որուն վրայ կնքուած էր կայսեր գլուխը, եւ կը հարցնէ. «Որո՞ւն պատկերն ու արձանագրութիւնն է», եւ կը յայտարարէ նշանաւոր իր խօսքը. «Գացէ՛ք, ինչ որ կայսեր կը պատկանի, կայսեր տուէ՛ք, եւ ինչ որ Աստուծոյ կը պատկանի, Աստուծոյ տուէ՛ք»։

Յիսուս նմանօրինակ իմաստուն պատասխանով զանց չընէր օրէնքներն ու կանոնները, ատոր համար ալ անոր ուսուցումները անժամանակ են ու մշտական։

Հետեւաբար, ամէն քրիստոնէայ ունի երկու քաղաքացիութիւն՝ երկրային եւ երկնային։ Այն երկրին, ուր կ'ապրի, պարտական է շատ բան, ինչպէս որ երկիրը իրեն պարտական է շատ բան՝ կենցաղական, բժշկական, ընկերային, կրթական, տնտեսական, եւայլն։ Քանի քրիստոնէան արժանապատիւ անձնաւորութիւն է, ան պէտք է ըլլայ պատասխանատու քաղաքացի. ձախողութիւնը քաղաքացիութեան մէջ, ձախողութիւն է նաեւ քրիստոնէական պարտականութեան մէջ։

Քրիստոնէան ըլլալով նաեւ երկնային քաղաքացի, ունի բազմաթիւ պարտաւորութիւններ Աստուծոյ հանդէպ։ Անհրաժեշտ է իմանալ, որ երկու քաղաքացիութիւնները երբեք պիտի չբախին իրարու, բայց երբ քրիստոնէան համոզուած է, որ բան մը Աստուծոյ կամքին համաձայն է, պէտք է կատարէ, իսկ եթէ Աստուծոյ կամքին հակառակ է, պէտք է դիմադրէ ամէն գնով. իսկ ուր է սահմանը երկու պարտաւորութիւններուն, Յիսուս այս մասին ոչինչ կ'ըսէ, անիկա կախուած է մարդու խղճէն, բայց իսկական քրիստոնէան միաժամանակ թէ՛ երկրի քաղաքացի է, թէ՛ Աստուծոյ թագաւորութեան քաղաքացի, ինչպէս որ Պետրոս առաքեալը կ'ըսէ. «Յարգեցէ՛ք բոլորը, սիրեցէ՛ք եղբայրութիւնը, վախցէ՛ք Աստուծմէ, պատուեցէ՛ք թագաւորները» (Ա. Պտ 2.17)։



New road from Artsakh to Armenia opens, no connecting road on Armenia’s side yet

YEREVAN—A new road connecting Nagorno-Karabagh to Armenia was opened to traffic on August 30.

The five-kilometer-wide Lachin corridor became Karabagh’s sole overland link to Armenia following the 2020 war with Azerbaijan. Armenian forces pulled out of the rest of the wider Lachin district under the terms of the Russian-brokered ceasefire that stopped the six-week hostilities.

The truce accord called for the construction by 2024 of a new Armenia-Karabagh highway that will bypass the town of Lachin and two Armenian-populated villages located within the corridor protected by Russian peacekeeping troops.

Bowing to strong Azerbaijani pressure, the Armenian side agreed earlier this month to evacuate them by August 25 and start using a new bypass road constructed by Azerbaijan about a dozen kilometers south of that area. Azerbaijani troops entered those settlements on August 26 following the evacuation of their last ethnic Armenian residents.

Russian peacekeepers stayed on to guarantee the safety of vehicles travelling between Armenia and Karabagh. The Lachin corridor was officially shut down on Tuesday evening.

Karabagh’s top leaders were reportedly the first to in-

spect and use the new highway leading to Armenia.

“The Russian peacekeepers have already deployed there and will control the safe passage of citizens,” the Karabagh police said in a statement issued earlier in the day.

The Karabagh leaders arrived in an Armenian border village through a 5-kilometer road that links up to the highway built by the Azerbaijani side. The temporary road will function until Armenia builds its section of the new corridor. Government officials in Yerevan have said that work on that section will be completed by next spring.

The authorities in Stepanakert revealed the Azerbaijani demands to switch to the new corridor as they accused Azerbaijani forces of attacking Karabagh Armenian army positions in early August. At least one Azerbaijani and two Karabagh Armenian soldiers were killed in the fighting.

Yerevan initially rejected Baku’s demands as “not legitimate,” arguing that the truce accord gave Russia, Azerbaijan and Armenia three years to work out a joint “plan” for the construction of the new Armenia-Karabagh road. The Azerbaijani Foreign Ministry said, however, that the three sides agreed on the “route” of the new corridor early this year.

(Panarmenian)

Azerbaijanis reportedly settling in villages on corridor

YEREVAN — Azerbaijanis have reportedly started to settle in the Nagorno-Karabagh settlements of Berdzor, Ag-havno and Sus after hundreds of Armenian families were displaced less than 10 days earlier.

Aravot.am on September 4 published footage from the road that previously only served to connect the Armenian town of Goris to the Karabagh capital city of Stepanakert, which showed an Azerbaijani motorcade loaded with mattresses, bedding and other necessary items driving towards said villages.

The road through Berdzor (the Lachin corridor) is now used by Azerbaijanis too but a new route connecting Nagorno-Karabagh to Armenia opened to traffic on August 30.

The corridor, currently used as connection between Armenia and Karabagh, was supposed to serve its purpose at least until the fall of 2023, but Azerbaijan built a new road and demanded that the corridor be moved now.

Nagorno-Karabagh’s authorities informed the few remaining Armenian residents of the town of Berdzor and the villages of Ag-havno and Sus that are situated along the current Lachin corridor that no Russian peacekeepers will be left in the territory after August 25 and, therefore, they needed to leave their homes before the end of the month. However, a top Russian diplomat has said that the peacekeepers were not going to move an inch.

(Panarmenian)

Church cross consecrated in Shosh

STEPANAKERT—Primate of the Artsakh Diocese of the Armenian Apostolic Church, Bishop Vrtanes Abrahamyan, consecrated the cross of the Holy Mother of God Church in Artsakh’s Shosh village on September 3.

The church pastor, regimental priests of the Artsakh Defence Army, as well as the faithful from the village of Shosh and its nearby settlements attended the consecration ceremony, the Artsakh Diocese said.

Patron Karen Jalavyan, who was among the attendees, played a key role in the church renovation.

Yerevan again shuns Artsakh anniversary events

STEPANAKERT—Armenia’s government and parliament sent no official delegations to Stepanakert on Friday for official ceremonies to mark the 31st anniversary of the establishment of the unrecognized Nagorno-Karabagh Republic.

The ceremonies were attended instead by separate delegations of the three political groups represented in the National Assembly. The ruling Civil Contract party’s delegation consisted of only two parliamentarians.

“We are in Stepanakert as members of Armenia’s National Assembly,” said one of those lawmakers, Rustam Bakoyan. “This was the decision made by the [ruling party’s] parliamentary group.”

Bakoyan would not say why the parliament’s leadership, also affiliated with Civil Contract, did not send an official delegation to Stepanakert as did last year. The parliament’s press office and leaders of its pro-government majority could not be reached for comment.

In a written statement, Prime Minister Nikol Pashinian congratulated the Karabagh Armenians on the anniversary of the proclamation of their republic not recognized by any country. Pashinian reiterated the official

Armenian line that the Karabagh conflict will remain unresolved until the issues of the disputed territory’s status and security are “addressed irrevocably.”

Statements to the contrary are “inappropriate,” he said, alluding to Azerbaijani leaders’ regular claims that Azerbaijan essentially ended the conflict with its victory in the 2020 war with Armenia.

“The Republic of Armenia will continue to support the maintenance of normal life, security and human rights protection in Nagorno-Karabagh,” added the statement.

Pashinian said nothing about the future status of Karabagh acceptable to Yerevan. His political opponents and other critics claim that he is intent on helping Baku regain full control of the Armenian-populated territory.

The Armenian premier last visited Stepanakert during the six-week war stopped by a Russian-brokered ceasefire in November 2020.

“Artsakh (Karabagh) must continue to move along the path of independence,” Arayik Harutiunian, the Karabagh president, said in a statement issued on the occasion.

(RFE/RL)

Garo Paylan raises concerns about destruction of ancient Armenian monasteries in Turkey

VAN — Turkish-Armenian lawmaker Garo Paylan has raised concerns about the destruction and isolation of the Saint Bartholomew Armenian Monastery in the region of Bas-kale of Turkey’s Van province.

The church has been standing for 1600 years but has been damaged and isolated in the past 100 years and is now being deliberately destroyed, he said.

Paylan has been visiting the Armenian churches and monasteries in the provinces of Van and Mush to learn more about the condition of historical and reli-

gious monuments in said areas.

“The monastery has been completely destroyed. The arch of the entrance door has been maintained, but the dome is damaged. I am asking the Ministry of Culture of Turkey: What do you think? What do you think is the benefit of destroying the monastery? Will Turkey gain or lose from the destruction of the monastery?” Paylan said.

Paylan noted that only a few of the hundreds of Armenian monasteries in Van are standing today, one of which is St. Tovmas Monastery in Gandzak.

“I call on everyone to take responsibility for the preservation of this wonder located on the shores of Lake Van,” Paylan wrote on Twitter.

“I visited the historical Armenian monasteries of Mush and Van, which have unfortunately fallen into disrepair. The main responsible party for restoring and repairing our [the monuments] is certainly the government of Turkey. However, as Armenians, we must remember our heritage, we must pursue their restoration.”

(Panarmenian)

Pashinyan, Aliyev agree to draft peace deal

BRUSSELS — Armenian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev agreed to “step up substantive work” on a peace treaty during their fourth trilateral meeting hosted by European Council President Charles Michel in Brussels on August 31.

Michel praised the over four hour long meeting, during which the leaders also discussed border issues, humanitarian issues and connectivity, as “open and productive.”

“Today, we agree to step up substantive work to advance on the peace treaty governing inter-state relations between Armenia and Azerbaijan,” read a statement by Michel released after the meeting. The leaders resolved to task their Foreign Ministers to meet within one month to work on draft texts.

Michel has brokered two previous trilateral meetings with the South Caucasus leaders this year. During a trilateral summit in Brussels on April 6, Pashinyan and Aliyev agreed to start work on the preparation of a peace treaty.

Armenia accepted a five-point proposal from Azerbaijan in March regarding the elements that would be enshrined in a peace treaty, including mutual recognition of each other’s sovereignty and territorial integrity, mutual affirmation of the absence

of territorial claims to each other and a legally binding obligation not to make such claims in the future. The Armenian side has also said that guaranteeing the security and rights of the Armenians of Artsakh and determining the final status of Artsakh should be part of a peace deal.

Pashinyan, Aliyev and Michel also “reviewed progress on all questions related to the delimitation of the border and how to best ensure a stable situation.” They decided that the bilateral commission on the delimitation of the state border will hold its next meeting in Brussels in November.

The commission held its second meeting the day before Pashinyan and Aliyev’s meeting in Brussels.

During the August 30 meeting hosted in Moscow, the sides “discussed organizational and procedural issues, exchanged detailed views on the regulation of the joint activity and further workings of the commissions,” according to near identical statements from the Armenian and Azerbaijani Foreign Ministries. They also “expressed gratitude to the Russian side for organizing the meeting at a high level.”

In a statement from the Russian Foreign Ministry, the Russian side “expressed readiness to continue consultative

and technical assistance” on border delimitation, “promoting stability and security in the border areas.”

Pashinyan and Aliyev decided to launch negotiations on border delimitation during their previous meeting in Brussels on May 23. That same day, Armenian Deputy Prime Minister Mher Grigoryan and his Azerbaijani counterpart Shahin Mustafayev were appointed the heads of a bilateral commission on border delimitation and demarcation.

Grigoryan and Mustafayev held their first meeting on May 24 at an undisclosed location along the Armenia-Azerbaijan border. They “reiterated their readiness to work on delimitation and other relevant issues, including border security issues within the commissions,” according to the Armenian Foreign Ministry.

Pashinyan, Aliyev and Michel also “reviewed progress of discussions on the modalities for unblocking the transport links” during this week’s summit.

During their May 23 meeting, Pashinyan and Aliyev had agreed on “principles governing transit between western Azerbaijan and Nakhichevan, and between different parts of Armenia via Azerbaijan” regarding “border administration, secur-

Continued on page E2

A Mari Usque Ad Mare

CANADA AND BRITISH COLUMBIA INVEST \$29.5-MILLION TO MAKE B.C. SAFER

In a recent joint declaration made by the Federal Minister of Intergovernmental Affairs, Infrastructure and Communities Dominic LeBlanc and British Columbia’s Minister of Public Safety and Solicitor General Mike Farnworth, an investment of more than \$29.5-million was announced. This investment will be used to reduce and hopefully avoid completely the risk of floods and rock slide events in communities across B.C.

In addition,the necessary funding for the prevention of floods will be provided to Peters First Nation, Regional District of Fraser Fort George, City of Trail, Town of Golden, the Village of Canal Flats, Regional District of Central Kootenay, the City of Greenwood, and K’ómoks First Nation.

Minister LeBlanc said: “Improvements to natural infrastructure and effective flood prevention measures help protect people, property, and livelihoods. The projects announced today will create jobs, improve critical infrastructure across B.C., and help communities withstand natural disasters. We will continue to work closely with our Indigenous, provincial, and municipal partners to adapt to climate change and build resilient communities.”

Minister Farnworth said: “One of the things we’ve been learning coming out of 2021 and seeing the unprecedented damage caused by the recent flooding and mudslides is that we need to increase the resilience of at-risk communities. Funding these infrastructure projects advances our work to prepare and adapt to climate change, and better protect homes, property, businesses, and infrastructure from flooding in the future.”

FEDNOR INVESTS \$950,000 IN AGRI-FOOD

The Government of Canada has been working on strengthening the food supply chain for Canadians, at the same time they’re working on supporting the development of the sector as it extremely critical for Canada future. Having a strong food supply chain are crucial and necessary to all Canadians to make sure the needs of all are met. The agri-food sector enlarge represents a means of supporting economic growth as well as seeing the supply chain improvements.

Terry Sheehan, MP for Sault Ste. Marie and Parliamentary Secretary to the Minister of Labour, recently announced a FedNor investment of \$951,530. This investment will see two projects that will be designed to help growth and provide the necessary diversification in the agri-food sector of Northern Ontario. This announcement was made on behalf of the Minister of Indigenous Services and Minister Patty Hajdu,.

“Northern Ontario’s farmers and agri-food producers feed families across the nation. Today’s funding from FedNor of \$951,530 will directly support the Rural Agri-Innovation Network and the Penocean Hills Co-operative in Saulte Ste. Marie as they work to expand and diversify production. Not only will this strengthen Canadian supply chains, but it will also help create and maintain good, local jobs,” said Minoster Hajdu.

MP Sheehan, said: “The FedNor funds announced today will help good, locally produced food remain available while also supporting growth and diversification in the critical agri-food sector supply chain. We are proud to support our local farmers and producers with these projects that will help foster partnerships and create new growth and new opportunities for Northern Ontario.”

FEDERAL GOVERNMENT INVESTS \$150,000 TO ADVANCE GENDER EQUALITY IN MANITOBA

The Minister for Women and Gender Equality and Youth Marci Ien announced a \$150,000 investment for two Manitoba-based organizations to advance gender equality in their communities. Minister Ien made the announcement during a visit to the Rainbow Resource Centre in Winnipeg. \$26,390 of this new investment will be given to the Institute for International Women’s Rights in Manitoba.

This funding will be used to conduct research and make the necessary policy suggestions to make sure that Manitoba’s COVID-19 recovery is able to support the needs of marginalized communities. Additionally \$127,144 of this investment will be going to the Rainbow Resource Centre. This much needed funding will serve to strengthen its capacity and improve the inclusiveness with respect to sex, sexual orientation, gender identity, and expression. Indigenous women, women with disabilities, members of LGBTQ2+ communities, along with newcomers, Black, racialized, and migrant women are all disproportionately impacted by longstanding inequities and this investment will see that the support is given where needed.

“As a society, we cannot progress if women and gender-diverse individuals continue to face barriers that prevent them from fully accessing economic, social, and leadership opportunities. I applaud the Rainbow Resource Centre, the Institute for International Women’s Rights – Manitoba, and all other organizations working to advance gender equality in Canada. It’s through collaboration that we’ll make a difference,” said Minister Ien.

ISHKHAN GHAZARIAN

Artsakh FM David Babayan to visit Washington

WASHINGTON, DC — Republic of Artsakh Foreign Minister David Babayan will hold policy consultations across Washington, DC — including Congressional briefings, think tank roundtables, university lectures and community gatherings — during an upcoming visit to Washington, DC coinciding with an Armenian National Committee of America (ANCA) Federal Policy Seminar.

Minister Babayan will offer the keynote speech at an ANCA event dedicated to Artsakh security and liberty held at the historic Woodrow Wilson House, the museum honoring the US President who championed efforts to secure a US mandate to support the Armenian Republic in 1918. He will also be the featured speaker at the “Capitol Hill Salute to Artsakh’s

Independence,” organized in cooperation with the Congressional Armenian Caucus, which will be held on Monday, September 19. Due to Congressional regulations related to COVID-19, supporters of Artsakh freedom must request to attend the Capitol Hill event.

“We welcome Minister Babayan’s consultations across Washington with US policymakers and foreign policy stakeholders — as well as his remarks on Capitol Hill, at the Wilson House and at our policy conference — as a meaningful contribution to constructive US engagement on Artsakh Republic status and security issues,” said ANCA executive director Aram Hamparian. “Artsakh’s voice — in Washington and on the world stage — represents the unbending resolve, the

abiding democratic aspirations, of the Armenian nation to endure, to survive and thrive on the very frontier of world freedom against the forces of darkness and dictatorship.”

The ANCA Federal Policy Seminar — a four-day series of presentations, roundtable discussions and Capitol Hill visits for chapter and community leaders — will focus on targeted initiatives to advance ANCA strategic priorities: saving Artsakh, strengthening Armenia, holding Azerbaijan and Turkey accountable, and securing justice for the Armenian Genocide.

Following his Washington, DC visit, Babayan will be traveling to California for a series of events and meetings with Armenian American community leaders and elected officials.

(The Armenian Weekly)

PASHINYAN...

continued from page E1

ity, land fees but also customs in the context of international transport,” without identifying what those principles are.

The November 9, 2020 ceasefire agreement ending the 2020 Artsakh War states that, within the process of opening regional economic and transport connections, Armenia would provide transport links between the western regions of Azerbaijan and Nakhichevan in order to organize the unimpeded movement of citizens, vehicles and goods in both directions.

Aliyev has repeatedly

called for the creation of a “Zangezur corridor” passing through Armenia’s southern province Syunik free of passport or customs controls, a demand that the Armenian government has rejected.

Pashinyan said that Armenia is prepared to facilitate transit between Azerbaijan and Nakhichevan “right today” and invited people from Azerbaijan to travel through Armenia to Nakhichevan during a cabinet meeting on August 4.

“We are ready to provide that connection every day dur-

ing this time. It is Azerbaijan that does not take advantage of the opportunities provided by us. We still say today that in accordance with the procedure established by the legislation of the Republic of Armenia, come, cross the border of Armenia, go to Nakhichevan. Just today,” Pashinyan said.

Pashinyan, Aliyev and Michel also had a “detailed discussion on humanitarian issues, including demining, detainees and the fate of missing persons” this week.

